Տ. ԽՈՐԵՆ ԱՎԱԳ ՔԱՀԱՆԱ ԿԻՐԱԿՈՍՅԱՆԻ ՔԱՐՈԶԸ՝ ԽՈՍՎԱԾ Ս. ԳԱՅԱՆԵ ՎԱՆՔՈՒՄ ՄԱՏՈՒՅՎԱԾ Ս. ՊԱՏԱՐԱԳԻՆ

(22 հոկտեմբեր, 2023 թ.)

Յանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ. ամէն:

«Ո՞չ սա է որդին Յովսեփայ»
(Ղուկ. Դ. 23)։

Այսօր Սուրբ Պատարագի ընթացքում ընթերցվեց Ղուկասի Աւետարանի 4-րդ գլխից մի հատված, որտեղ նկարագրվում է Տեր Հիսուս Քրիստոսի փրկչական առաքելության մեկնարկը։ Այն սկսվում է անապատում սատանայի կողմից փորձություններով, Տիրոջ առաջին հրապարակային խոսքով եւ Նրա դեմ առաջին անգամ ի հայտ եկած անհանդուրժողականությամբ։

Անապատում փորձությունից հետո հոգով զորացած, ինչպես ասում է ավետարանիչը, Հիսուս գալիս է Իր հարազատ քաղաք՝ Նազարեթ, եւ մտնում ժողովարան։ Այստեղ Նրան տալիս են Եսայի մարգարեի գիրքը՝ ընթերցելու համար։ Հիսուս փնտրում, գտնում է մի հատված եւ բարձրաձայն ընթերցում. «Տիրոջ Հոգին ինձ վրայ է. դրա համար իսկ օծեց ինձ, ինձ ուղարկեց աղքատներին աւետարանելու, սրտով բեկեալներին բժշկելու, գերիներին ազատում քարոզելու եւ կոյրերին՝ տեսողութիւն, կեղեքուածներին ազատ արձակելու, Տիրոջն ընդունելի տարին հռչակելու» (Ղուկ. Դ. 18)։ Ընթերցումից հետո տեսնելով, որ բոլորի աչքերը սեւեռվեցին Իր վրա մի տարօրինակ հետաքրքրությամբ, շարունակում է՝ ասելով. «Այս գրվածքները կատարվեցին այսօր, երբ լսում էիք ձեր ականջներով»։

Հրեաները հավատում էին, որ Մեսիայի գալու ժամանակը պիտի լինի Տիրոջ տարին։ Փաստորեն պարզ ու հասկանալի բառերով Տեր Հիսուս Քրիստոս հռչակում է Եսայու մարգարեության իրականացումն Իր անձի միջոցով՝ հայտնապես վկայելով Իր մեսիական առաքելության մասին։

Ավետարանիչը նկարագրում է նաեւ Քրիստոսի այս խոսքերի թողած տպավորությունը մարդկանց վրա, որոնք զարմացել էին Նրա իմաստությունից. «Միթե սա Հովսեփի որդին չէ՞» (Ղուկ. Դ. 23)։ Այսինքն՝ նրանք թերահավատորեն ընդունեցին Քրիստոսի մեկնաբանությունները Եսայի մարգարեի հիշյալ խոսքերի մասին, որովհետեւ Քրիստոս իրենց ճանաչած հյուսն Հովսեփի որդին էր, ինչպե՞ս Նա կարող էր լինել Մեսիան։

«Մարգարեն իր գավառում պատիվ չունի»,— ասաց Քրիստոս եւ նրանց հիշեցրեց հինկտակարանային երկու իրադարձություն Եղիա եւ Եղիսե մարգարեների օրերից, երբ դժվարությունների ու փորձությունների մեջ Աստծու օրհնությանն արժանացան այլազգի հեթանոսները, որոնց հրեաներն արհամարհանքով էին վերաբերվում, մինչդեռ իրենցից ոչ մեկը նման շնորհ չգտավ։ Երբ այս լսեցին Նազարեթի բնակիչները, լցվեցին բարկությամբ, Քրիստոսին դուրս հանեցին իրենց քաղաքից եւ լեռան դարավանդը տարան, որպեսզի գահավեժ անեն։ Բայց Քրիստոս, նրանց միջով անցնելով, գնաց այնտեղից։

Ավետարանի այս հատվածը մեր ուշադրությունը հրավիրում է Քրիստոսի խոսքերին ունկնդիր լինելու եւ այդ խոսքերն ընդունելու կարեւորության վրա։ Այստեղ մարդիկ վտարեցին Քրիստոսին իրենց քաղաքից։ Նրանք չցանկացան լսել եւ տեսնել, որ, իրոք, եկել է նոր ժամանակը՝ Տիրոջ ընդունելի տարին, երբ պիտի տեսնեն կույրերը, պիտի լսեն խուլերը, պիտի մխիթարվեն վշտացյալները, եւ ազատվեն գերյալները։ Նրանք համարեցին, որ Քրիստոսի խոսքերն անարգանք են իրենց հավատքին, իրենց սկզբունքներին, իրենց իմացածին եւ առհասարակ իրենց կյանքի կանոններին ու նպատակներին։ Նազարեթի բնակիչները ոչ միայն չցանկացան մոտենալ Քրիստոսին, այլեւ Նրան իսպառ հեռացրեցին իրենցից։

Այս պատմությունը, ցավոք, միայն Նազարեթին չի վերաբերում։ Ժողովարանի այս իրադարձության շարունակությունն են կազմում փարիսեցիների ու դպիրների վերաբերմունքը Հիսուսի քարոզչությանը, Հուդայի համբույրը, աշակերտների ուրացումները, Քրիստոսի դատավարությունն ու խաչելությունը, նրան ձաղկելն ու ապտակելը, Նրա ծարավ շուրթերին քացախով թրջոց դնելը։ Այս պատմության շարունակությունն են հավատացյալների հալածանքները, սրբոց նահատակությունները, Քրիստոսի Եկեղեցու առջեւ ծառացած խոչընդոտներն անցյալում եւ այսօր։ Մարդիկ պատրաստ չեն լսելու Քրիստոսին, առավել եւս՝ Նրա խոսքերով ապրելու եւ գործելու։

Սա պատմություն է նաեւ յուրաքանչյուրիս մասին, մեր հավատի, կյանքի ու կենցաղի, մեր կուրության, մեղքերից գերության, հոգիների ամլության մասին։ Սա, մեծ հաշվով, նաեւ այսօրվա աշխարհի արտացոլումն է։ Քրիստոս հեռացվում է մեր քաղաքներից ու բնակավայրերից, մինչդեռ դրանցում ծաղկում են մեղքն ու մեղսագործությունը, մոռացվում են Ավետարանի պարզ ու հստակ պատգամները, դրանց փոխարեն ստեղծվում են բարոյական ու քաղաքակրթական անհասկանալի կանոններ, ուղղակիորեն կամ անուղղակիորեն քաջալերվում են կեղծ արժեքներն ու մոլորությունները, որոնք ամենեւին էլ ներդաշնակ չեն իրական քրիստոնեության հետ, հաճախ նույնիսկ հակառակ են Սուրբ Գրքին, որի գոյությունն իսկ երբեմն մոռացության է տրվում։

Ինչ է կատարվում առանց Քրիստոսի ապրող աշխարհում։ Այդ աշխարհում բավարար չափով տեղ չունեն կարեկցանքն ու սրտացավությունը, արդարությունն ու սերը, բարությունն ու անկեղծությունը։ Իսկ թե ինչն է իշխում այդ ամենի փոխարեն, ամենքիս է տեսանելի։ Աշխարհը հրճվում է ձեւով ու ձեւականությամբ, խաբեության, նյութասիրության, փառամոլության ու անառակության մոլուցքով, կեղծիքներով ու խարդավանքներով։ Եւ ամենուր ականատես ենք լինում մարդկային մեղքի հետեւանքներին՝ կորուստներ եւ ավերածություններ, տրտմություն եւ անամոքելի վիշտ ու այսպես շարունակ։

Եւ այսպես վատնվում է Տիրոջ ընդունելի, Քրիստոսի հարության լույսով պսակված եւ Նրա աստվածային սիրով օծված ժամանակը։ Վատնվում է մեզ շնորհված՝ ապաշխարության, թողության, հաշտության ու համերաշխության ժամանակը։ Այնինչ մենք մեր հոգիներն ամայացնում ենք Նազարեթի հրեաների պես, որոնք մերժեցին իրական Մեսիային եւ շարունակեցին իրենց անլույս կյանքը։

Խորհրդանշական պատկեր է Քրիստոսի հարազատ քաղաքի բնակիչների՝ Փրկչին իրենց քաղաքից դուրս հանելու պատկերը։ Սրանով նրանք վանեցին Աստծու շնորհը եւ մերժեցին փրկության հրավերը։ Ե. դարի հայրերից Օգոստինոս երանելին իր աշխատություններից մեկում խոսում է Աստծու քաղաքի մասին։ Նշանավոր աստվածաբանը մարդկության պատմությունը ներկայացնում է իբրեւ երկու համայնքների՝ «երկրային քաղաքի» եւ «Աստծու քաղաքի» պատմություն, որը նաեւ արտահայտում է պայքարն Աստծու եւ սատանայի միջեւ։ Եւ ըստ նրա ճշմարիտ բնորոշման՝ բնակիչների մեղքերն ու ապականված բնությունն են որո-

շում՝ մարդը վերին, այսինքն՝ Աստծու քաղաքի, թե՞ ստորին՝ երկրային քաղաքի բնակիչ է, եւ այդ քաղաքն Աստծո՞ւն է, թե՞ սատանայինը։

Բայց Քրիստոսով, ինչպես եւ Ինքն ասաց, ամենուր հռչակվել է փրկության ժամանակը՝ Տիրոջ ընդունելի տարին։ Քրիստոս Իր առաքյալների միջոցով նաեւ մեր երկիր այցելեց, հետո Ինքը երկնքից իջավ Սուրբ Էջմիածին՝ մեր ժողովրդին նույնպես պատմելու, որ Տիրոջ Հոգին Իր վրա է, որ եկել է մեզ ավետարանելու, սրտով բեկյալներիս բժշկելու, գերիներիս ազատում քարոզելու եւ կույրերիս՝ տեսողություն, հայոց ժամանակագրության մեջ եւս հռչակելու Տիրոջն ընդունելի տարին, որ չմոլորվենք այս աշխարհի մթին կիրճերում ու չընկղմվենք ճահիճների մեջ, որ մեղքերը կոծկելու համար նոր ու ավելի մեծ մեղքեր չգործենք, որ խավարը լույս չհամարենք, որ չուշանանք ապաշխարությունից։

Իբրեւ Հայ Եկեղեցու մյուռոնադրոշմ զավակներ եւ նրա ուղղափառ վարդապետությունը կրողներ՝ մենք մեր կյանքը, մեր միջավայրը, մեր ընտանիքները եւ մեր երկիրն առհասարակ կոչված ենք դարձնելու Աստծու քաղաք։ Որպեսզի Տերն օրհնի մեզ՝ որպես Իր հավատարիմ հոտի, եւ զորակից լինի՝ հաղթահարելու մեր օրերի այսչափ կորուստները, տագնապներն ու փորձությունները եւ այսքան դառնությունների մեջ շնորհի հույս ու լավատեսություն։

Սուրբ Պատարագի այս նվիրական պահին, Բարձրյալի շնորհով զորացած, բացենք մեր հոգիները Քրիստոսի առջեւ եւ ընդունենք մեզ հետ խոսող Փրկչին անկեղծ սրտից բխած փառաբանությամբ, ինչպես առաքյալը բացականչեց. «Տեր իմ եւ Աստված իմ»։ Եւ դառնանք գործակից Քրիստոսին՝ հանուն մեր հոգիների փրկության։

Թող Աստծու սերն ու շնորհը եւ առատ ողորմությունը ամենքիս հետ լինեն այժմ եւ միշտ եւ հավիտյանս հավիտենից ամէն։